ԻԶ· ՏԱՐԻ ԹԻՒ 1849 ՈՒՐԲԱԹ 9 ՓԵՏՐՎԱՐ 1879

ՄԷՃՄՈՒԱՅԸ ՀԱՎԱՏԻՍ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

ԹԵՐԹԸ 1 ՂՐՈՒՇ ԹՈՒՂԹ

ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Բ. Դուռն երկու շաբաթ առաջ Ռուսիոյ հետ հաշտութեան վերջնական դաշնագիրը կնքեց։ Շաբաթ մ'ալ ետքը 8 միլիոն ոսկւոյ փոխառութիւն մը կնքեց. ուստի այլեւս ուրիշ բան չմնար—ըսած էինք—Բ. Դրան՝ բայց եթէ անյապաղ ասիական բարենորոգմանց գործոյն սկսիլ, եւ երջանիկ կ'համարէինք զմեզ թէ մօտ օրէն զայդ ալ աւետելու բաղդն ունենամք։

Արդարեւ շատ շուտ հասաւ, քան զոր չէր սպասուէր, մեր այդ բղձացեալ ժամը, զի Բ. Դըրան երէկի այն պաշտօնական յայտարարութիւնը, թէ երկերկու Քօմիսէր ընտրուեր է, որոց մէկ մասը Տիգրանակերտի եւ Հալէպի կողմերը, միւս երկուքն ալ Կարնոյ եւ Վանայ կողմերը պիտի երթան տեղական վիճակն աչքէ անցընելու եւ ըստ տեղական պիտոյից՝ հարկ եղած ընդհանուր բարենորոգումներն հաստատելու։

Ահ—ինչպէս կըսէինք երէկ—Պերլինի դաշնագրին 61րդ եւ 62րդ յօդուածոց, այն է Հայաբնակ եւ բոլոր ասիական գաւառաց բարւոքումներուն գործադրութեանը սկսուելուն առաջին մէկ քայլը կ'համարուի, եւ տարիէն աւելի ժամանակ մը յուսով սպասելէն ետքը, այսօր կ'տեսնենք որ օսմ. կառավարութիւնը վերջապէս ձեռն ի գործ կ'արկանէ Հայաստանի գաւառները բարեկարգելու։

Մենք շատ թերեւս այնքան մեծ կարեւորութիւն մը չըպիտի տանք Դրան այս ձեռնարկին, մտածելով թէ՝ այնքան ատենէ ի վեր եղած բարւոքման խոստումներն ու ձեռնարկեալ գործերն ինչ արդիւնք ունեցան որ հիմակուան այս ձեռնարկէն ինչ արդիւնք եւ ելք տեսնել կարենայ սպասուիլ։

Այս կերպ մտածման եղանակը շատ սխալ է այսօր։ Դրան կախկէն կառավարութեան ընթացքն ու դրութիւնը արդարեւ անգործութենէ եւ օրանձգութենէ զատ ուրիշ բան չէր, իսկ ներկայ պաշտօնէութեան եւ կառավարութեան ընթացքն ու դրութիւնը, գործելէ զատ ուրիշ բան չկրնար լինել։ Մեք համոզուած եմք որ Խայրէտտին բաշայի պաշտօնէութիւնը կեցած է ոչ ուրիշ բանի՝ բայց եթէ գործելու եւ բարի գործելու համար, զի այնպէս համոզուած եմք թէ մեր արդի պաշտօնէութիւնը լաւ ճանչցած է թէ ինչ աղէտներ բերաւ հասոյց այդ անգործութիւնն ու անհոգութիւնը մեր երկրին գլխուն եւ թէ քաջ խելամուտ եղած է՝ որ Դրան կառավարութիւնը եթէ այսուհետեւ ալ չգործէ, երկիրն ալ կ'կործանի կառավարութիւնն ալ, անգործութիւնն այսուհետեւ մահ եւ կործանումն կըբերէ, ուստի ապրելու եւ կենալու համար պէտք է գործել եւ բարի գործել, զի չարիք գործելն ալ կ'կործանէ երկիրը, ինչպէս եղաւ եւ դեռ կ'կենայ եղածն առջեւնիս։

Հետեւաբար քանի որ մեր արդի կառավարութիւնն ալ երկրին կործանմանն ու աղէտից չփափաքիր, ապա ուրեմն հարկ անհրաժեշտ է որ պիտի գործէ, պէտք է գործել դէպ ի լաւն, թող գործուի այդպէս արդիւնքն ինչ որ ալ լինի լաւ է քան թէ բնաւ բան մ'ալ չըգործելը։

Արդարեւ կան ըսողներ որ եթէ Դուռը այդ բարենորոգումները ուղղակի բարեկամ տէրութեանց աջակցութեամբն ու գործակցութեամբը կատարէր, աւելի ազդու եւ արդիւնաւոր կրնար ըլլալ, մինչդեռ ինքն իրեն ընելը այդ ազդուութիւնը չխոստանար։

Սոյդ կերպի սա մինչեւ մէկ աստիճան մը, բայց որովհետեւ Դուռը այնպիսի փափուկ նկատումներ եւ դիւրազգացումներ կ'տածէ որք թոյլ չեն տար իրեն իր ներքին բարենորոգմանց գործադրութեանը մասին բարեկամ բայց օտար տէրութեանց մէկուն կամ մէկ քանիին ուղղակի գործակցութիւնն ու աջակցութիւնն ընդունելու։ Տարակոյս չկայ թէ՝ բարեկամ տէրութեանց այս մասին ըրած գործակցութիւնը աւելի ազդու եւ մեծ արդիւնք մը կրնայ յառաջ բերել, բայց քանի որ Դուռը զայդ չկրնալ ընդունիլ կ'երեւի, եւ բարեկամ տէրութիւնք ալ չեն ուզեր եւ հարկ չեն տեսներ զայդ բանի ընդունել տալու իրեն, ուստի ի բաց թողլով այդ պարագայն, բաւական է միայն տեսնել որ Դուռն ինքն իրեն միալով ալ՝ դարձեալ կըգործէ. թէպէտ արդիւնքը նըւազ ազդու եւ նուազ իրական պիտի ըլլայ եղեր, հոգ չէ բաւական է որ արդիւնք մ'ըլլայ, բայց քիչ ըլլայ արդիւնքը, փոխանակ բնաւ արդիւնք մը չկենալու։

Հայաբնակ գաւառներն անխնայ կ'չարչարուէին, կառավարութիւնն այս անգամ երկերկու գործակատար կ'ղրկէ, մին տաճիկ միւսը քրիստոնեայ, երթալ տեղական պիտոյքները քննել եւ պէտք եղած բարենորոգումներն ի գործ դնել։

Մեծ եպարքոսը ուրիշ աւելի իմաստուն եւ խոհական խորհուրդ մ'ալ յղացեր է որ յիշեալ յանձնաժողովներն իրենց որոշեալ տեղերը զրկելէն առաջ, հրամայեր է իւր խորհրդականին որ Ասիոյ հայ ժողովրդոցը կրած տառապանացն ու հարստահարութեանցը վրայօք ինչքան գրութիւններ որ հաղորդուած են Պատրիարքարանէն Դուռը, ասոնց ամենքն ալ ամփոփելով պարունակութիւնքն իրեն ներկայացնէ, որպէսզի եպարքոսն ինքն ալ այդ դէպքերը քննիչ յանձնաժողովներուն հաղորդէ, որ հիմնական մ'ըլլայ սոցա ընելիք քննութեանցն։

Ինչ եղանակաւ ալ որ կատարեն ասոնք իրենց քննութիւնը ըստ մեզ անտարակուսելի է թէ սա արդիւնքն ու հետեւանքը յառաջ պիտի գայ որ՝ Ասիոյ Հայերն կենաց, ընչից եւ պատւոյ ապահովութենէն, ինչպէս նաեւ քաղաքացիութեան իրաւանց հաւասարութենէն զուրկ են, հետեւաբար յանձնաժողովներն բաւական է որ այդ պակասը տեսնեն եւ լեցնեն, ապահովութիւնն ու հաւասարութիւնը Հայոց վերադարձնեն, և ահա Թուրքիոյ ամբողջ հայ ազգը իր փափաքին ու նպատակին հասած կըլլայ։

Արդարեւ մենք կուզէինք որ այդ քննիչ յանձնաժողովը Եւրոպացի անդամներ ալ ունենար ինչպէս ունին Արեւելեան Ռումելիի եւ Ռումելիի օսմ. միւս գաւառաց համար կարգեալ կամ հաստատուելիք վերակազմութեան յանձնաժողովները։ Բայց ասի Պերլինի դաշնագրին դաշնագրին համազգային մէկ օրինօքը հարկ դրուած էր Դըրան վրայ թէ պարտաւոր է ընդունիլ այդ եւրոպական խառն յանձնաժողովը. բայց՝ որովհետեւ Հայաստանի համար ալ այդպիսի տրամադրութիւն մը չըկար որ Դուռը պարտաւոր համարեր զինքը, Հայաստանի կազմակերպութեանը համար եւրոպական խառն յանձնաժողով մը ընդունելու, հետեւաբար աւելորդ աշխատութիւն մ'է մեր այն պահանջումը թէ եւրոպական յանձնաժողովոյ մը պէտք էր յանձնուիլ Փոքր-Ասիան բարենորոգելու հոգն ու պաշտօնը

ղը չկրցինք ընդունել տալ իրեն։

Ուստի հիմայ ետ կենալով մեր այդ գէթ այժմ անհնար պահանջումներէն, պէտք է միանամք օսմ. կառավարութեան հետ, և միատեղ խորհրդակցինք թէ որո՞նք են Հայուն բուն ցաւերն, որք շատ չափազանցուած կերևին եղեր մեծ եպարգոսին և թէ ի՞նչ են ատոնց իրական և ճշմարիտ դարմանները։

Եթէ այս մասին խնայենք մենք մեր խորհուրդն ու աջակցութիւնը Դրան և ետ քաշուինք, մեծ տարակոյս ունիմք որ վերջէն Դրան սոյն ինքնայօժար բարեկարգման ձեռնարկէն ալ օգուտ մը չվաստակինք և դարձեալ նոյնը մնամք ինչ որ եմք այժմ։ Հետեւաբար խոհեմութիւնը կ'պահանջէ մեր կողմէն, որ աջակցինք և փարիմք Դրան այս բարեկարգման ձեռնարկին, որպէս զի այս վերջին ձեռնարկն ալ նախորդաց պէս ապարդիւն չելնէ մեզ համար։ Մենք այս ձեռնարկը —ինչպէս ըսինք— հայասրնակ գաւառաց բարեկարգման առաջին քայլը կը մեկնենք, և կ'համարձակիմք պնդել թէ Հայաստան այս անգամ իրապէս պիտի բարւոքի։

* * *

Երկուան Գահիրէէն հասնող հեռագիրները ծանրակշիռ լուր մը կ'բերեն Եգիպտոսի համար։

Բանակէն արձակուող քանի մը սպայներ խբտիվին ներկայութեանը թէ խբտիվը նախատեր և թէ երկու քրիստոնեայ նախարարաց, Նուպար բաշայի և Պ. Ռիլսբնի դէմ ալ անարգական խօսքեր ընելով, Նուպար բաշայի վրայ յարձակեր և զանի վիրաւորեր են։ Ասոր վրայ Նուպար բաշա, որ պաշտօնէութեան գահերէց էր, հրաժարական տալով ընդունուեր է։

Այս ցաւալի իրողութիւնը մեծապէս ՀԱՍԱԿԱՐ պիտի ըլլայ —կարծեմք— Եգիպտոսի թէ կառավարութեանը և թէ վարչութեանը, զի քանի մը բոպայից այսպէս խբտիվին նեռկայութեանն իսկ ցոյց տուած ամբարտաւանութիւնն և ասոնց անպատիժ մնալէն զատ՝ ունեցած զօրաւոր ազդեցութիւններն կապացուցանէ թէ Եգիպտոսի մէջ անիշխանութիւն և կամ յեղափոխութիւն մը կայ զոր խբտիվը չկրնալով զսպել, ստիպուեր է Նուպար բաշայի հրաժարականն ընդունիլ, այն Նուպարին՝ զոր Անգղիոյ և Գաղղիոյ կառավարութիւններն քնդերկար ճանչցած ըլլալով այդ մարդը և վրան կատարեալ վստահութիւն ունենալով, դորա պաշտօնէից գահերէց ընտրուելուն պայմանաւն էր որ Գաղղիա և Անգղիա ալ Եգիպտոսի օգնելու խօսք տուած էին։

Արդ այս ձեռնհաս մարդն այս անգամ քանի մը ղինուորական սպայից անկարգութեամբ և թշնամանօքը կ'տապալի, եւ Խեդիվն ալ անկարող զգալով զինքը սպայից այդ անկարգութիւնը զսպելու, Նուպարի հրաժարականը կընդունի։

Եգիպտոսի համար Նուպար բաշայի հրաժարականը՝ եւրոպական տէրութեանց Եգիպտոսի նկատմամբ ունենած համակրական զգացումն ու օգնելու յօժարամտութիւնին Եգիպտոսէն հեռացնել բսել է, չենք գիտեր թէ Խեդիվն ասոր տեղ ի՞նչ բան դնել է միտքը։

Կ'թուի թէ սպայից սոյն ապիրաւ յարձակմանն և նախատանացը գլխաւոր շարժառիթներէն մէկն ալ՝ Նուպարի և Պ. Ռիլսբնի քրիստոնեայ նախարարներ եղած ըլլալն է մահմետական Պետութեան երկրի մի մէջ, ուր ինչքան ազատութիւն և հաւասարութիւն քարոզուի, դարձեալ արարը իրմէն ստորին և իր գործոցը ծառայելու առարժան կ'համարի եղեր քրիստոնեայներն։

Ասի պարապ է ըսել թէ Եգիպտոսի յեղափոխութիւն մը սկսած է սպառնալ։ Այսպիսի վիճակի մը հետևանքն ու կասկածը ի՞նչ արդիւնք կ'բերէ, աւելորդ է ըսել։ զի ուր Նուպար չկայ, հոն Եգիպտական գործոց վարչութեան կանոնաւորութեանը և ուղղութեանը վրայ վստահութիւն ալ չկայ։ Ասոր համար ըսինք թէ այս ցաւալի դէպքը կ'ՀԱՍԱՏԷ Եգիպտոսի թէ Ինքնապէս և թէ՝ բարոյապէս։

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի՞նչ ընել պէտք է աղքատաց համար (*)։

Քաղաքական տնտեսութեան ամենէն դժուարին խնդիրներէն մին է այս։ Այս գիտութիւնը համաձայն է Սուրբ Գրոց սա խօսքին թէ, «Ան որ չուզեր գործ գործել՝ հացդալ թող չուտէ» (Բ Թես. Դ. 10)։ Աստուած յայտնապէս կուտայ այս պատուէրն իբրեւ սկզբունք, և եթէ կառավարութիւնը կամ առանձին մարդիկ կերակուր կամ ստակ կուտան անոնց որ մուրալ աւելի կ'ընտրեն քան գործել, հակառակ կ'գործեն գիտութեան և Սուրբ Գրոց սկզբանը միանգամայն։ Եթէ բոլոր խնդիրն այս ըլլար, պատասխանը շատ դիւրին էր, բայց կան ուրիշ աստիճանի աղքատներ, այսինքն անոնք որ կ'ուզեն գործել բայց չեն կրնար գործ գտնել։ Նաև անոնք որ հիւանդ կամ ծեր կամ խեղ ըլլալով անկարող են աշխատելու։

Յայտնի է թէ այսպիսի մարդիկ իրաւունք ունին օգնութիւն յուսալու հասարակութենէն։ Ասոնց աղքատութիւնը ոչ թէ յանցանք այլ դժբաղդութիւն է։ Թէ կրօնքը և թէ քաղաքական տնտեսութիւնը կըսեն թէ պարտք է օգնել այսպիսեաց։ Բայց այս պարտքը որո՞ւն է։ Եթէ ունին ազգականներ որ կրնան օգնել, ասոնց պարտքն է օգնել։ և եթէ այս վերջինները կամաւ չեն ուզեր կատարել այս պարտքը, կառավարութիւնը ստիպելու է զանոնք։ Այս առ հասարակ ընդունուած սկզբունք է ՀԱՍԱՐԱԿԱԿԻՐՔ ազգաց մէջ և ստուգիւ համաձայն է Սուրբ Գրոց վարդապետութեանը որ կըսէ. «Թէ որ մէկը իրենիներուն ու մանաւանդ իր ընտանեացը հոգ չտանիր, անիկա հաւատքը ուրացած է, ու անհաւատէ մըն ալ գէշ է» (Ա. Տիմ. Ե. 8)։

Բայց ամեն հասարակութեան մէջ կան մարդիկ որ չունին ազգականներ որոնցմէ նպաստ ընդունին։ Ուրեմն որո՞նց պարտքն է օգնել այսպիսեաց։ Կառավարութի՞ւնը պիտի հոգայ զանոնք թէ եկեղեցին, և կամ անհատ մարդոց ողորմութեանո՞ւ թողուելու են։ Մին քան զմիւսն աւելի պարտական չէ անօգնական աղքատաց օգնելու։ Յայտնի է թէ տնանկ աղքատք իրաւունք ունին՝ ամբողջ հասարակութենէն սպասելու իրենց օգնութիւն, և շատ ազգեր կ'ընդունին թէ այս պարտականութիւնը կ'վերաբերի ամբողջ ազգին կամ կառավարութեան։ Թուրքիոյ մէջ կը կարծուի թէ տնանկ աղքատները նայիլ եկեղեցիներուն պարտքն է։ Կ'երևի թէ առաքելականներն ալ այս սկզբունքն ունէին։ Բայց այսպէս բնել ան ատեն հարկ էր, վասն զի ոչ հռոմէական հեթանոս տէրութենէն և ոչ Հրէից տեղական իշխանութենէն կ'յուսացուէր օգնութիւն կամ խնամք ինպատ աղքատ և հալածեալ Քրիստոնէից։ ուստի և առաքելոց օրինակը հարկաւ չուժեր վերոյիշեալ խնդիրը։

Քրիստոնեայ տէրութեանց այժմեայ դրութիւնը սա սկզբունքին վրայ կ'կայանայ թէ տնանկ աղքատաց օգնել բոլոր հասարակութեան պարտքն է, և կառավարութիւնը միայն կրնայ ստիպել հասարակութեան կամ ազգին անհատներն իրենց հարբստութեանը չափով հանգանակել ի նպաստ աղքատաց։ Եկեղեցին այս կարողութիւնը չունի։

Բայց և այնպէս կառավարութիւնը կուտայ աղքատաց այնչափ բան միայն՝ որչափ հարկաւոր է կեանքը պահելու, անկէ աւելին կ'թողու անհատ մարդոց գթութեանը։

Այս դրութիւնը կ'ծառայէ կերակուր և բնակարան տալու բոլոր կարօտելոց, բայց վնասներ ալ ունի։ Նախ վասն զի օգնութիւն ընդունող աղքատն իրեն տրուած օգնութիւնը ոչ իբրև ողորմութիւն, այլ իբրև իրաւունք կ'համարի։ Երախտագիտութիւն չունի, այլ տժգոհ է ընդհանրապէս, և իրեն անիրաւութիւն եղած կ'համարի երբ աւելի չընդունիր։ Երկրորդ, հիւանդութեան և ծերութեան ատեն օգնութիւն ընդունելու ապահովութիւնը պատճառ կ'ըլլայ որ մարդիկ խնայողութիւն չեն ըներ, այսինքն ինչ որ կը վաստկին կ'ուտեն, և բան մը չեն աւելցներ իրենց ծերութեանը համար։

Շարունակելի

Ա Զ Դ Ա Ց Ի Ն

Զմիւռնիոյ Գեր. Առաջնորդը կ'տեղեկագրէ Պատրիարքարանի թէ՝ Աբչէհիր որ 500 հայ բնակիչ ունի, առանց հոգևոր հովուի մնացած է, և վարժարաններն ալ անխնամ և տխուր վիճակի մէջ, մանաւանդ որ այս անգամ բողոքականք ալ հոն գալով երկսեռ վարժարան մը բացած և ժողովուրդը որսալու վրայ ըլլալով, կ'ինդրէ Պատրիարքարանէն որ ուսեալ և տաճկագէտ վարդապետ մը ղրկէ Աբչէհիր, ժողովուրդը պահպանելու և հսկելու համար։

Տիգրանակերտի մէջ կ'լսեմք թէ ազգային ներքին յուզմունք և երկպառակութիւն ծագելով, ժողովուրդը առաջնորդարանը կսիեր և գաւառին կրօն. ու քաղաքական ժողովները բբռնութեամբ լուծելով ցրուեր է։

Խառն ժողովը գրած է այս մասին տեղեկութիւն և բացատրութիւն պահանջել Տիգրանակերտի առաջնորդէն։

Սեվաստիայէն հետաւոր տեղեկութիւնները կ'գրեն Հարբենիքի։

. . . Խմբագիր։

Մեր նախորդ նամակաբերացած եմք Կովատունի խնդրոյն նկատմամբ մի քանի տեղեկու-

թիւն հաղորդել Ձեզ քան կարի, բայց այսօր գոհութեամբ սրտի կ'լսեմք թէ՝ քաղաքիս վսեմ կուսակալն՝ Գեր. Առաջնորդ Հօր առաջարկութեամբ և խորհրդակցութեամբ յանձնաժողովն կատարած բռնական հարցաքննութիւնքը անվաւեր վճռեր է, նկատելով որ Միհր-Ալի՝ հակառակ ն. վսեմութեան աղատամտութեանը, սուրբ կիրսով չափ պատեանէն մերկանալով՝ սատիկ սպառնալիք և կբրօնի և ազգութեան դէմ անլուր հայհոյութիւններ ժայթքեր է, և թէ յանձնաժողովն ալ անոր կոյր գործիք եղեր է և ձայնակից, որով ժողովուրդն ահաբեկեր է։

Ուստի Ն. Վսեմութիւնը որոշեր է երկրորդ անգամ քաղաքիս մէջ մի անաչառ քննութիւն կատարել։

Դարձեալ կ'լսեմք թէ՝ Միհր Ալիի սրբանեակներէն ոմանք՝ քաղաքէս 1 1/4 ժամ հեռի եղող Բրգնիր գիւղին մէջ ալ բաւական նեղութիւն տուեր են տեղւոյն հայ բնակչաց։

Կըսուի նաև թէ՝ Միհր-Ալիի քով երկու առևանդեալ քրիստոնեայ կիներ կան, յորոց մին Հայ և միւսը Յոյն է եղեր։

Իսկ Ցերութեան յայտարարութիւնները ժողովրդէն պատառուելոյ մասին՝ կըսուի թէ՝ առաջ ինքը Միհր-Ալին այդ յայտարարութիւնները պատռեր և ոտքին տակն առնելով կոխոտեր է, միանգամայն կառավարութեան գէմ անարգական և ապստամբական խօսքեր ըներ է։ Այս դէպքերէն կ'վախցուի թէ՝ գուցէ սոյն հանրածանօթ աւտրակապետն ալ հոս մի ապստամբութիւն հանէ, վասն որոյ կ'խնդրեմք ազգասիրաբնամ Պատրիարք Սրբազանէն՝ որ ժամ յառաջ այս սրիկային քաղաքէս հեռացուելոյն համար ամեն ջանք իգործ դնէ կառավարութեան քով։

13/25 յնվ. 1879

Սեբաստիա

ԱՅԼԵՒԱՅԼ

Մաքսատան վերատեսուչ Սապրի բաշա նախագահ, եւ Փորթուքալեան Միքայէլ էֆանդամ անուաներ են Դրան կողմանէ վարչական նոր խառն Մասնաժողովոյ, որոյ ձեռքը պիտի յանձնուի սամ. վերածելի արժէքներոց և 8 միլիոնի փոխառութեանը յատկացեալ արոց և հաստիցի փոխութիւնը։ Միւս 4 անդամոց ալ Զը Գաղղիոյ, Ն ալ Անգլիոյ կառավարութենէն պիտի քնարուին։

—Մօտերս զրոյց մ'ելաւ թէ Պոլսոյ քաղաքապետը մտադիր է եղեր Բումէլի և Անատոլու Հիսարի պարիսպները գլցնելով քարերն ալ ծախել ի նպաստ Քաղաքապետական մնացուկին։ Այս լուրը սուտ կ'հանուի։

—Լարնէէն կ'ծանուցանեն թէ տեղւոյն յունաց մետրոպոլիտը քանի մ'օր առաջ ցերեկ ատեն փողոցէ մ'անցնելու միջոցին, պուլկարներն վրան յարձակելով մաղերէն կ'բռնեն, և գետին տապալելով ընդ քարշածել կուզեն։ Բարեբաղդաբար առաջ սպոյ մը անմիջապէս օգնութեան կ'հասնի մետրապոլիտին և զանի բռնութեամբ կազատէ Պուլկարաց ձեռքէն։ Կերևի թէ այս յարձակմանը պատճառը՝ անցեալները պուլկարաց գրաւել փորձած բայց չյաջողած յոյն եկեղեցւոյ մը գոցուելու դէպքէն յառաջ եկած ոխակալութիւն է։

Վրիպակ.—Երէկուան թերթերնուս առաջին երես 3րդ սիւնակ առաջին տողին մէջ «60 ՎՀՇ» բառը պէտք է «60 ոսկի» կարդալ։

Միևնոյն թերթին 3րդ երես 3րդ սիւնակը 20րդ տողին մէջ «զոր» բառը «քան» պիտի ըլլայ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Լոնտրա 20 փետր.

Բարեյուսոյ Գլխէն առնուած հեռագիրը մը կ'ծանուցանէ թէ, յնվ. 24ին 4000 Զուլուներ անգղիական վուտ զնդապետին հրամայած թեին վրայ յարձակեր են, իսկ անգղիացիք զարկերու ցրուեր են թշնամին։ Կորուստին քիչ բան է։ Վուտ զնդապետը ապահովեցաւ իր զօրքերը Ուիթէքի մէջ բանակեցուցեր է։ Զուլուներուն ռազմամթերքը սպառիլ սկսեր է։

Ֆիլիպէ 19 փետր.

Առջի օր Արևելեան Բումէլիի առժամանակեալ կառավարիչ Սիթուլիին զորապետին ձեռք առած միջոցներն հետևեալներն են։—Մինչև որ ռուս զօրքերն ամբողջ Արևելեան Բումէլիի դաշտը պարպեն, հասարակաց ապահովութեանը պահպանելու համար խումբ մը ռուս հետևակ զօրք պիտի կենան ժողովրդոց տունները։

Զբրբանի մէջ անցեալ օրնագտահած անկարգութեան հեղինակներն եղող յոյս (պուլկար) գրծակներ Զբրբանի ռուս կառավարութեան կողմանէ ձերբակալուեցան, որոնք պիտի իյնան իրենց պաշտօններէն։ Միւս խառնութեանց մէջ յանցաւորներէն ալ 4 հոգի բռնուելով, հսկողութեան տակ Ֆիլիպէ ղրկուած են, ուր բանտարկեալ կ'կենան։

Զբրբանի փոխ կառավարիչն ալ փոխուելով տեղը ուրիշը տիպի դրուի։

Զբրբանի ժողովրդեան կողմէն 24 պատգամաւոր Ֆիլիպէ եկան, Զբրբանի ժողովուրդներէն բանտարկեալներն բռնուելուհամար, իսկ պատգամաւորներն այսօր տեղերնին ճանրուեցան, յայտարարուելով իրենց որ արդարութեան և իրաւանց ապատօրէն գործադրութեանը դէմ կենալու եթէ յանդգնին, իրենք ալ նմանապէս ձերբակալուելով պիտի բանտարկուին։

Այս տարուոյ հասած

Ս. Բէթերսպուրգ 20.—Ռուսիոյ կայսրն այսօր տաճկառուսական դաշնադիրը վաւերացուցեր։

Պուքրէշ 20.—Բումանիոյ կառավարութիւնը ծանոյց Պերլինի դաշնագիրն ստորագրողներուն, թէ մինչև որ իրենք Արաբ-Թապեան բումանացւոյ կողմէն գրաւուելուն ի նպաստ վերջնական որոշումին տան, Բումանիոյ կառավարութիւնը հրաման բրած է պարպել Յիշեալ ամրոցը։

Գահիրէ 20.—Կ'հաւատան թէ Շէրիֆ բաշա իբրև Արտաքին գործ. պաշտօնեայ՝ նուստար բաշայի յաջորդ պիտի անուանի։

Պատերազմի պաշտօնեայ Բաթիպ բաշա ալ նոյնպէս հրաժարական տուաւ։

ԴՐԱՄԱԿԱՆ

Լոնտրա 19.—	Բաց	12 7/16
	Դոց	12 7/16
Բարիզ 20.—	Բաց	12 37 1/2
	Դոց	12 47 1/2
	Պուլվար	— —

Այս առաւօտ բացուեցաւ	13·20
Թղթադրամ	437·20
Բումէլի	48·00

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վագրթ այսօր կ'հաստատէ թէ Վեհ. Սուլթանին ուղղեալ շնորհակալութեան Ն'ղերձ մը սկսեր է եղեր ստորագրուիլ մայրաքաղաքիս տանիկ ժողովրդոց կողմանէ, զոյն Սուլթանին մատուցանելու համար։

—Գանի մ'օր առաջ զրոյց մը տարածուած էր թէ Արևելեան Բումէլիի մէջ խել մ'ապատակ պուլկարաց ձեռքը զէնք տրուեր է։ Այս անգամ հաստատութիւն գտնելով յիշեալ լուրը, կըսէ վագրթ, մինչև իսկ զինեալ ապստամբ պուլկարաց թիւը 100·000ի հասեր է կըսուի։

—Արևելեան-Բումէլիի պուլկարներն եւրոպական յանձնաժողովոյ արարմանցը դէմ իրենց ընդդիմութիւնը շարունակելով, անցեալ օր Զբրանի մէջ պատահած խռովութեան միջոցին անգղիացի պաշտօնատար մ'ալ հալածուեր է ամիսներէն, և հաղիւ հիւպատոսարան մը փախչելով ապաստաներ և ինքզինքը ազատեր է։

—Պաշտօնական հրատարակութիւն մը կ'ծանուցանէ թէ Սիւլէյման բաշա, իրեն դէմ բացուած դատին մէջ, եղած քննութիւններէն հաստատուելով որ, Պալքանի, Դանուբի և վերջէն բոլոր Բումէլիի հրամանատարութեանը մէջ զինուորական օրինաց հակառակ քնթացից և գործմանց մէջ գտնուած է, պատերազմական Ատեանի միջոցաւ քան զինուորական պատժական օրինաց Ա՝ Գ. և Զ՝ Գ յօդուածոց, իր զինուորական աստիճաններէն զրկման, ունեցած պատուանշանները իրմէն առնուելու և ցկեանս աքսորանաց դատապարտուեր է։

Նմանապէս Վանայ և Պայազիտի օսմ. զօրաբաժնին հրամանատար Ֆայիզ բաշա ալ պատերազմական Ատեանի կողմէն օրինաղանց վճռուելով, նոյնպէս աստիճանազրկութեան, պատուանշանները առնուելու և 6 ամիս բանտարկութեան դատապարտուեր է։

Այն վճռագրերն Վեհ. Սուլթանին մատուցուելով ի վերացումն, կայսրը, յիշեալ Սիւլէյման բաշայի պատիժներէն մինակ ցկեանս աքսորը 6 տարուան աքսորի փոխելով թեթեցուցեր, և Ֆայիզ բաշայի միանակ 6 ամսեայ բանտարկութիւնը՝ 6 ամսեայ աքսորի փոխեր է։

Սիւլէյման բաշա դշ. օր պատատ յաքսոր ղրկուեր է։ Ֆայիզ բաշա ալ քանի մ'օրէն Ղօնեա յաքսոր պիտի ղրկուի։

—Մասնաւոր հեռագիր մը կ'ծանուցանէ թէ Կարնոյ կուսակալ Իսմայիլ Հաղդը բաշա, Ռ. Դրնէն ստացած հրաւէրին վրայ՝ ճանրայ ելեր է մայրաքաղաք գալու։

—Սամսոնի իշխան Քոսթաքի Ատոսիտէս բաշա, իր նորոգ ընտրութեանը մասին շնորհակալութիւնը մատուցանելու համար, Առջի օրը Վեհ. Սուլթանին ներկայացեր է։ Կըսուի թէ իր պաշտօնին հաստատութեան հրովարտակէն զատ՝ նաև Սամսոնա կղզւոյն բնակչաց ինչ ինչ նոր արտօնութիւններ շնորհողուիլ Հրովարտակ մ'ալ պիտի տայ եղեր։

—Էտրնէի յոյն մետրապոլիտին դանակոծուելուն վրայօք ցանաց պատրիարքարանը քաշուած հեռագիրներէն կիմացուի թէ, պուլկարաց ամբոխ մը, մէջերնին կիներ ալ բլլալով, նոյն երեկոյին յունաց Առաջնորդարանէն ներս կ'մտնեն և մետրապոլիտը դուրս փոցոցը հանելով չարաչար կ'ծեծեն։

Այս լուրը իմանալուն պէս Ցունաց Պատրիարքը թագրիր մը կ'գրէ Դուռը, յանցաւորաց պատժուիլը պահանջուելով, և Պատրիարքարանի Գարու Քէհ. եասին ալ Էտրնէ կ'ղրկէ կատարելիք հարցաքննութեան ներկայ գտնուելու։

Ասոնցմէ 25–30 պուլկար բռնուելով թօթլէպէն զօրապետին առջը հաներ են, որն որ յանցաւորաց անխնայ պատժուիլը խստիւ պատուիրեր է։

Մետրապոլիտը ծեծուելէն ետքը, հելլէն հիւպատոսին օգնութեամբը նորէն Առաջնորդարան բերուելով մարդը հոն ապրիւն փոխեր է, և կեանքը վտանգի մէջ է կըսուի։

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ

ԱԶԳԱՑԻՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

Գրեց Հ. Դրիդոր Վ. Գովրիկեան
Մխիթ. Ուխտէն
Վիէննա Մխիթ. Տպարան 1879

—·—

Բովանդակութիւն.—Մինչեւ ու նոր Պատմութիւնը՝ մինչև մեր օրերը հասցնող, համառօտ բայց կատարեալ դէպքերն, մասնաւորապէս ազգ. դպրոցաց գործածութեանը համար շինուած է.—Շատ հմուտ գրութիւն է, ուր յայտնապէս կերևի գերմանական ճաշակ ու խորունկ հմտութիւն.—Այսոր արժէքն այնչափ աւելի մեծ է, որչափ առաջիններէն մէկն է ազգին մէջ, իբրև դասագիրք։ Վասն զի թէև կայ հատ մը ասկէ 30 տարի առաջ հրատարակուած, բայց, բաց անկէ, որ զուրկ է բոլորովին հաստատուն դրութենէ, շատ ընդարձակ բռնուած է և Պատմութեան հոգին ու ծուծը թողտալով, աւելի զուարճալեաց ու զրոյց. ներու միտ դրած է, որ պատմութեան չէ՛ թէ էական, այլ երկրորդական, մանաւանդ թէ երրորդական մասը կ'կացուցանեն։ Ուրիշ այլևայլ տեղեր ու այլևայլ ժամանակ հրատարակուած պատմութիւնները ամբողջ չեն, մասնական են, ուստի իբրև գործածութեան մէջ մտնելի դրքեր, հասարակութեան ձեռքը դեռ չեն կրնար տրուիլ։—Ուր թողունք որ մատենագիրը, շատ մտադիր հայեցուած մ'երբած է նաեւ ազգ. պատմութեան, զոր մինչև մեր օրերը հասուցած է՝ թուականներու ճշդութեամբ։ Կ'գտնենք ասոր մէջ նաև ազգ. մատենագրութեան վրայ բաւական տեղեկութիւններ։

Մաքուր տպագրութեամբ 296 էջ պարունակող սոյն դիրքը, համեմատութեամբ շատ աժան է, 2 ֆրանք գնով։ Կը ծախուի Վիէննայի Մխիթարեանց գրավաճառանոցն ի Բանկալթի և ամեն ազգային գրավաճառաց քով։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Թարգմանեալ ի Գաղղիական է

—·—

Վերջին տաճկա—ռուսական պատերազմն վրայով գաղղիերէն լեզուին մէջ մէկ քանի տարբեր հեղինակութեամբ հրատարակուած գործերէն ամենէն անկողմնակալն ու ճշգրտապատումը Ա. լը Ֆոսի երկն է՝ սորա հայերէն թարգմանութիւնը տեսը առ տեսը սկսած է հրատարակուիլ։ Արամեան տպագրութեամբ, մաքուր թղթի վրայ, մեծադիր և քառածալ, իրաքանչիւր տեսրը 2 պատկերօք զարդարեալ։

Սոյն հրատարակութիւնը խստահետաքրքրական եւ միանգամայն օգտակար գործ մը ըլլալով, կը հրաւիրուի յարգոյ հասարակութիւնը մէկ մէկ օրինակ ունենալու անկէ, որով թարգմանչին աշխատութիւնն ու խնամքն արդիւնաւորելուն ալ պատճառ մը կըլլայ։

Ա. տեսրը հրատարակուած է Յնվ. 28ին։ Կեդրոնատեղին է Ֆըրէկեան դրատունը. գին թերթին 1 ղրշ. արծաթ։

ԱԶԳ. ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՉԳԵՍՏՈՒՑ

Ֆ. ԿՐԱՆՊԱՈՒՄ և ԸՆԿ.
Նիւքսէք Դալտրրրմ թիւ 70
Ղալաթիա

Վիէննայի մէջ շինուած բնտիր ապրանքներ կ'ծախուին թէ մեծաքանակ և թէ հատով, գոհացուցիչ գիներով։

Ղալաթիա նոր 8 փետր.

ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ՍՐՅ.

Բաց		13 31
Դոց		13 30
Բարձր գին		13 31
Ցած գին		13 25
Թղթադրամ բաց		432 20
բարձր		434 20
ցած		432 20
Ժամը 11		433 00
Փոխ. 63ի	ֆր.	070 00
» 65ի	»	082.00
» 69ի	»	080 00
» 73ի	»	074.00
Դանձատուն		24 50
Սօսիէթէ Ժէնէրալ		4 22
Սօսիէթէ Օթթօման		3.00
Պանք տը Բոնսթ.		6.16
Քրէտի Ժէնէրալ		5 15
Թրամվէյ		1.85
Բաւմ. Երկաթուղի		49 00

ԸՆԴԹԱՑՔԻ ԴՐԱՄՈՎ
(Օսմ. ոսկի 100 դրամ 1 հալ-է)

Անգլ. ոսկի	109.28
Գաղղ. »	87.10
Բօլ	89.08
Բարպօն արծաթ	16.20
» թղթադրամ	09 00
Քրքմից	51.10
Հինգնոց	24.00
Մէթալիք	24 20
Ձերմակ մէճիտ	07.25
Պղինձ	184.10

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱԶԱՆ ԳՅՆՈՒԱՄ ՈՒ ԹԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի դեղը բոլորովին բուսեղէններէ բաղադրուած ըլլալով թէ՝ ներսէն և թէ՝ դուրսէն կը գործածուի ու բազմաթիւ ցաւեր ու հիւանդութիւններ շատով կը բժշկէ, ինչպէս որ վարը յիշուած է։

Ամեն տեսակ Քովի, Ըսամաքսի, մէջքի կամ ուղիքներու ցաւերու նաև Թանչք, Քօլէրա և այլ ամառուան հիւանդութիւններ ունեցողները այս դեղէն խմելու են հետեւեալ կերպով։ Կէս գաւաթ ջուրի մէջ, դիր ապուրի մը գրգալէն աւելի շաքար, վրան լեցուր անուշի դրդալ մը Փանասէ աղէկ մը խառնէ ու խմէ։

Կոկորդի հիւանդութեանց, և Ուռեցքի համար դեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կամ երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ երկու անուշի դրդալ այն բաղադրութենէն խմէ։ Յօդացաւի, Բիւմատիզմի, Ոտքի ցաւի, Սառամաքսի ոկ տեսակ տեսակ կռնակի ցաւերու համար դուրսէն փանասէ քսելով աղէմը չփելու է։ Անուայի ցաւի համար քիչ մը բամպակ փանասէի մէջ թաթխելով ցաւած ականջին վրայ դնելու է։

Ամեն ատեն երբոր ցաւի մը համար դուրսէն փանասէ քսել հարկ կըլլայ, եթէ քիչ մը ալ խմուի աւելի շատ բժշկութիւն կըլլայ։

Մարմնոյ այրուած կամ ճմլուած տեղերը բժշկելու համար վանդը պատահածին պէս փանասէին վրան ալէկ մը լեցնելու է։ Փանասկով ալն. կարուած վերքերը բժշկելու համար՝ արիւնը չորցած շատով մը վերքը կապելու և գալեն վրայէն փանասէ լեցնելու է մինչև որ լաւ մը թրջի։ Փանասէն նաև աբեան շրջանը նարաւացնէ ու բոլոր բնութիւնը կը զօրացնէ։

Այս դեղին օգտակարութիւնը վրայ երկարօ էն գրել աւելորդ կը համարիմք, գործածողները զայն միշտ կը գովին, ուղղը կրնայ անձամբ փորձել. գինն աժան է։ Կը ծախուի Մրնասեան և Ընկերաց Ամերիկեան վաճառատունը որ ի Ղալաթիա կ. Պոլսոյ

—·—

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՆՐԿՈՏԱՍԱՆ ԿԵՍԱՐԱՑ

ԳՈՐԾ ՍՈՒԼԵՅՄԱՆԻ
Թարգմանեաց Ե. Մ. Ս.

Սոյն պատմութեան երկրորդ և վերջին հատորն ալ Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայուելով, կ'ծախուի Եէնի-Ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը, և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 1 ֆրանք 25 սանթիմ,

---

ԲԱՆԱԼԻ ՀԱՅԵՐԷՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Գրեց
Տ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ահաւասիկ գեղեցիկ մեթոտ մը Մամուրեան էֆ.ի աշխատասիրութեամբ մուտ գտնելով մայրենի լեզուի ուսման մէջ, կ'աւաջնորդէ աշակերտները շարադիր լինելու, չըսպասելով որ անոնք քերականութեան տաղտկալի շրջանէն անցնին.

Այս գրքոյկը Զմիւռնիոյ Տէտէեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայուելով կը ծախուի Եէնի-Ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 50 սանթիմ։

ՆՈՐ ՕՐԱՑՈՑՑ

1879
ԹՈՒԱԿԱՆԻ ԲՐԻՍՏՈՍՈՎ
Կ'ծախուի գին 20 փարա մէճիտ

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՑՑ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
1879
ԹՈՒԱԿԱՆԻՆ ԲՐԻՍՏՈՍՈՎ
Գին 40 փարա մէճիտ
Տղ-էրո-Ռիւն Զոբդ-ըրէան

13 կենդանագիր պատկերներով զարդարեալ սոյն ընդարձակ օրացոյցը բաց ի բուն օրացոյցէն կ'պարունակէ նաև վերջին Ռուսս—Տաճկական պատերազմին համառօտ պատմութիւնը, առողջապահական ամենակարևոր գիտելիքներ, բարոյական ակզբունքներ, խոյթման և այրածի դեղեր, ընտանեկան ճճիներ ջնջելու կերպեր։ Ասոնցմէ զատ ազգային նշանաւոր բանաստեղծ Քամառ Քաթիպայի «Հայերուս Թուքը» վերնագրով մէկ շնչարհիկ ոտանաւորը։

Կ'ծախուի Զարդարեան վաճառատունը, Յուլթան Համամ փողոց, Աշրը էֆէնտի խանի դիմաց, թիւ 12 և գրավաճառաց քով։

ՏԷՐ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՊՕՂՈՍ ՔԻՐԻՇՃԵԱՆ
Ղալաթիա Ռէրշէմպէ-Բազար Պաքքը փողոց թիւ 12։